

## ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

Թ.ԱՏՐՈՆ

Մեծպատեան սեզօնի առաջին կիսում տրուած ներկայացումներին միակ հետաքրքրականը տիկ. Մայսուրեանի բննֆիսն էր: Համակրելի դերասանուհին հայ հասարակութեանը ծանօթացրեց Հաուպտմանի գեղեցիկ գործերից մէկի հետ— «Ռօզա-Բերնդ», դրամա չոր արարուածով: Ի պատիւ հայ թատերասէր հասարակութեան, պիտի ասել, որ լուրջ գեղարուեստական պիէսներն արդէն սկսել են գրուել նրա համակրանքը: Այս մի ուրախալի նշան է, որ ցոյց է տալիս, թէ հայ թատրոնը ոտք է դրել առողջ շաւղի վրայ: Այժմ կարելի է ասել, որ առ միշտ որոշուած է կոպիտ էֆեկտների վրայ հիմնուած կրկէսային գործերի վիճակը:

Տիկ. Մայսուրեանը իրան յատուկ շնորհքով և զգացումով կատարեց Ռօզա Բերնդի դերը—այդ դիւրահաւան, միամիտ, բայց զգայուն, սիրաբորոք և իւր գեղեցկութեան շնորհով անկման ենթարկուած խեղճ կնոջ բարդ տիպարը: Պէտք է ասած, որ այդ տեսակ նուրբ դերերի համար տիկինը այժմեան խմբի մէջ հաւասարը չունի: Նա հետեւում է ժամանակակից առողջ բնական դպրոցին, որ դերասանից պահանջում է խելք և զգացումների իմաստալի արտայայտութիւն և արհամարհում է բիրտ զգացումներ շոյող գոռում-գոչիւնները, ղաղաղակները, խոշոր ու կոշտ ձեւերը և արտաքին էֆեկտները: Ռօզա Բերնդի դերով տիկինը ապացուցեց, որ ինքը մեծ սխալ է գործում երբ յանձն է առնում կատարել այնպիսի անիմաստ դերեր, որպիսին է, օրինակի համար, Բուկայայի դերը «Դաւաճանութիւն» անունով գոեհիկ պիեսի մէջ: Հաուպտման և Սմբաթով—երկինք և երկիր և յանցանք է գործում գեղարուեստի դէմ այն դերասանը, որ կարող է սաւառնել դէպի երկինք, կպչում է երկրին:

Տիկինը արժանացաւ թատրոն ժողովուած բազմաթիւ ինտելիգենտ հասարակութեան բուռն ծափահարութիւններին և ստացաւ մի քանի նուէրներ:

Հայ բեմի վերջին տարիների համեմատաբար կանոնաւոր գոյութիւնը բաւական զարկ տուեց ինքնուրոյն ռեպերտուարին: Ասպարէզ եկան պիեսներ գրելու նոյն իսկ այնպիսի մարդիկ, որոնք երբէք գրականութեան հետ առնչութիւն չեն ունեցել (տիկ. Պօպօլեան, Նիլշէ վ. Մուրադեան, Կոնստանդին Սատրսեան): Թատրոնական մթնոլորտը գրաւիչ է, հասարակական հրապարակական ծափերը հրապուրիչ են: Բնական և հասկանալի է, որ մարդիկ երբեմն յափշտակուելով այդ մթնոլորտով, մոռանում են այն տարրական ճշմարտութիւնը, թէ դրամա գրելու համար հարկաւոր է ունենալ մի բան—շնորհք: Հայ դերասանական խումբը և Դրամատիական յարգելի ընկերութիւնը շատ բարեսիրտ են: Նրանք չեն կամենում ոչ մի հեղինակի սիրտը վշտացնել և բեմ են հանում ամեն մի գրուածք առանց երկար մտածելու: Մենք, ի հարկէ, դէմ չենք այս տեսակ վիհանձնութեան: Թող ամեն ինչ ներկայացուի, հասարակութիւնը կը դնահատի ըստ արժանւոյն: Թող ով կամենում է իւր ոյժերը փորձի դրամատիական գրականութեան մէջ, անշնորհքները հիասթափուած կը հեռանան ասպարիզից և գուցէ վերջի վերջոյ երևան դան նոր ձիրքեր:

Մեծպատեան սեղօնի երկրորդ կէսը գրեթէ ամբողջովին յատկացրած է բենեֆիտներին: Առաջին բենեֆիտը Աբէլեանինն էր, որ կայացաւ կիրակի մարտի 28-ին:

Տաղանդաւոր Թրտիստը, ինչպէս միշտ, այս անգամ էլ իւր բենեֆիտի համար ընտրել էր նոր և հետաքրքրական պիես: «Մարդկութեան բարեբարներ», դրամա Յ արարուածով, հեղ. Ֆիլիպպի—այս մի զեղեցիկ պատկերացում է հնի և նորի մրցման: Մի երիտասարդ գիտնական բժիշկ, յանուն իւր արհեստի բարձրութեան և ճշմարտութեան հարկադրուած է ասպարէզ հանել իւր մերձաւոր ազգականի—աներոջ խոշոր սխալը և առ հասարակ թիւր հասկացողութիւնը գիտնական էթիկայի մասին: Այս պատճառով նա զրկուած իւր սիրեցեալ կնոջ սիրուց, որ, սիրելով հօր պատիւը, բաժանուած է նրանից: Յաղթութիւնը վերջը տանում է ճշմարտութիւնը: Մերունի բժիշկը իւր գլխին եկած փորձանքներից ճնշուած, ինքնասպանութեան է դիմում, սակայն անաջող: Նրա զաւակները, իրանց հօրը փրկելու համար, դիմում են նրա ախոյեանին, որ և փրկում է իւր հակառակորդի կեանքը և սրանով վերադարձնում կնոջ սէրը:

Այս է Ֆիլիպպիի պիեսի հիմնական գաղափարը: Հին է այս գաղափարը, վաղուց և շատ անգամ շահագործուած, բայց և միշտ համակրելի նոյն իսկ իւր միակողմանի ուղղութեամբ: Պիեսը գրուած է բաւական բեմական և լուում է հաճոյքով, թէ և, իրրև գերմանական գրականութեան արդիւնք, դերժ չէ սանտիմենտայլ տեսարաններից: Չափազանցութիւններ նոյնպէս կան, օրինակ երիտասարդ բժշկի մի դիշերուայ ընթացքում 48 մեծ էջերից բաղկացած գիտնական զեկուցում պատրաստելը. ծերունի բժշկի մի օրուայ մէջ բարձրութիւնից ընկնելը, ինքնասպանութեան դիմելը, բժշկուելը և այլն: Այս բոլոր թերութիւններով հանդերձ՝ պիեսը արժանի է մի առժամանակ հայ թարգմանական ռեպրտուարի մէջ մնալու, մանաւանդ որ պ. Համարաձուռեանը նրա թարգմանութիւնը կատարել է բաւարար:

Պ. Արեւեանը կատարում էր երիտասարդ անհիւ և գաղափարական բժշկի դերը և կատարեց այն իրան յատուկ տաղանդով և խորը զգացումով: Հասարակութիւնը յարգեց բենեֆիցիանտին դափնեայ պսակով: Թատրոնը լիքն էր: Մափահարութիւններն անվերջ: Վերջը ներկայացուած տեսարանը «Իօն Գառլուից» ցանկալի տպաւորութիւն չը գործեց հասարակութեան վրայ, որովհետև թէ դերակատարները և թէ հանդիսականները յոգնած էին:

Երկրորդ բենեֆիսը օր. Ադամեանինն էր: Այս դերասանուհին առաջին տարին է Թիֆլիսի բեմի վրայ երևան գալիս: Տաղանդաւոր համարել նրան առ այժմ չենք կարող, բայց որոշ չափի շնորհք ունի: Օրիորդն իւր բենեֆիսի համար ընտրել էր Բարբեցի Վոթ աշխարհ» անունով դրաման: Ինքը կատարում էր Մերցիա քրիստոնէուհու դերը և կատարեց ոչ տաղտկալի, Թատրոնում հասարակութիւն քիչ կար:

Մեզ առ հասարակ զարմացնում է մի հանգամանք. ինչու դերասանները սովորութիւն են արել իրանց բենեֆիսներին տեղերի գները այնչափ բարձրացնել: Չը գիտենք ինչով է տարբերում մի սովորական ներկայացում մի բենեֆիսից: Միայն նրանով, որ բենեֆիսեան ներկայացման արդիւնքը դերասանին է հասնում, բայց ինչով են որոշում դերասանները, որ հասարակութիւնն իրանց աւելի է յարգում և սիրում, քան թատրոնական գործը: Առ հասարակ շատ տարօրինակ բան են անում դերասանները, իրանց գերադասելով թատրոնից: Մեր բարեկամական խորհուրդն է հայ դերասաններին՝ թողնել իրանց բենեֆիսներին տեղերի գները բարձրացնելու սովորու-

Թիւնը և բաւականանալ սովորական գներով: Ապա թէ ոչ հասարակութեան այժմեան գանգատը կարող է փոխուել մի օր խիստ բողբոջի և մենք մի օր ականատես կը լինենք թատրոնի տալուութեանը բենեֆիսի օրերին, ինչպէս այս տեսանք օր. Ադամեանի բենեֆիսին:

\* \*

### ԳԻՏԱԿԱՆ ԵՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՆԸ

ԵՆՈՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՈՐՈՏԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ: Գիտութիւնը առաջ է գնում արագ քայլերով, քսաներորդ դարը իսկապէս գիտութեան յաղթանակի դար պէտք էր համարել. իւրաքանչիւր օր բերում է իւր հետ մի նոր տօբօրիա, որով հիմնովին շրջւում է հինը. բայց խօսենք օրուայ նորութիւնների մասին: Որոտ առաջացնող պատճառները այնքան էլ հասարակ չեն, ինչպէս կարծում են առհասարակ: Մինչև այժմ կարծում էին, որ որոտը օդային գոյացութիւնների էլքերական կայծի պայթիւնից առաջ եկած ձայնի ալիքներն է: Բայց պր. Տրուբբիշի անագին փորձերը ուրիշ բան են ապացուցանում: Տրուբբիշի փորձերի հետևանքներից երևում է, որ կայծակին հետևող որոտը առաջ է գալիս ջրային գոլորշիների վերլուծութիւնից: Գիտնական պրօֆեսօրը երկար տարիների ընթացքում պարապում էր ջրային գոլորշու լուսապատկերով: Մի շարք փորձերից յետոյ, նա վճռեց հետազօտել խիստ էլքերականութիւնը մեծ քանակութեամբ ջրային գոլորշի պարունակող մթնոլորդի մէջ անցկացնելուց ստացուած լուսապատկերը: Սկզբում նա յոյս ունէր հետազօտել ջրի գոլորշու լուսապատկերը էլքերական կայծը անցկացնելով ջրի մէկ մակերևոյթից դէպի միւսը. բայց այդ չը յաջողուեց: Այն ժամանակ Տրուբբիշը հետևեալ միջոցը հնարեց: Նա վերցրեց երկու փայտի կտոր, թաց արեց մաքուր ջրի մէջ և փաթաթեց ջրի մէջ թրջած բամբակով: Այնուհետև այդ փայտերը ամրացրեց մարտկոցի բեռներին և էլքերականութիւն անցկացրեց դորանց մէջ: Այդ գործողութեան ժամանակ առաջացան մի շարք շատ պայծառ կայծեր, ետևից էլ այնպիսի խիստ ճայթիւն, որ ինքը Տրուբբիշը կարողացաւ տանել ականջների մէջ բամբակ կոխելով և գլուխը հաստ թաշկինակով փաթաթելով:

Ճայթիւնի առաջնալը Տրուբբիշը բացատրում է թրթուածնի և ջրածնի միանալով, որոնք ստացւում են էլքերականութեամբ ջրի վերլուծութիւնից:

Այդ ենթադրութեամբ որոտի ոյժը կախուած է խոնաւութիւնից:

Արուեստական կայծակի լուսապատկերը բոլորովին համապատասխան է իսկական պատկերի լուսապատկերին, եթէ վերջինս դիտենք  $1\frac{1}{2}$  հեռաւորութիւնից նա էլ առաջանում է ամպերի մէջ: